

ԿԱՐԳ

Ուսանողների բավարարվածությունը առկա ռեսուրսներից և ինստիտուտի կողմից առաջարկվող ծառայություններից

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ) կողմից առաջարկվող առկա ստորաբաժանումների և կառույցների մատուցած ծառայությունների գնահատման վերաբերյալ հարցումների նպատակները, պահանջները, առարկան, անցկացման կարգը և պարբերականությունը:

1.2. Կանոնակարգը կիրառելի է ՀՖԿՍՊԻ-ի Ուսումնական բաժնի, կառուցվածքային ստորաբաժանումների հարցումների շրջանակում:

1.3. Հարցումների նպատակը կրթական ոլորտում բարեփոխումների իրականացումն է:

1.4. Հարցումների հիմնական պահանջներն են՝

- Հարցումների բովանդակության համապատասխանությունը ինստիտուտի նպատակներին և խնդիրներին,
- Մասնակցության գաղտնիությունը,
- Հարցման գործընթացի համակարգվածությունը և պարբերականությունը,
- Շարունակականությունը,

1.5. ՀՖԿՍՊԻ-ի հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ՀՖԿՍՊԻ-ի գիտական խորհուրդը:

2. Հարցման անցկացումը

- 2.1. Հարցումներին մասնակցում են ՀՖԿՍՊԻ-ի բոլոր ուսումնառողները:
- 2.2. Հարցման գործընթացը կազմակերպում է ինստիտուտի **ուսումնական բաժինը**:
- 2.3. Հարցումներն իրականացվում են հարցաթերթիկի միջոցով, առցանց՝ ինստիտուտի էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև ֆոկուս խմբերով:
- 2.4. Հարցման արդյունքները պետք է հասանելի լինեն բոլոր շահակիցներին:
- 2.5. Հարցումներն անց են կացվում տարեկան պլանավորման համաձայն, յուրաքանչյուր տարի ըստ հրատապության և անհրաժեշտության՝ լրացուցիչ հարցերի ներգրավմամբ: Ուստարվա սկզբին **ուսումնական բաժինը** կազմում է ուսումնառողների հարցման պլան-ժամանակացույց, որը ներառում է ՈԱԲ-ի, ինչպես նաև ստորաբաժանումների կողմից ամեն տարի անցկացվող հարցումները՝ ուսումնական գործընթացի որակի խնդիրներն ապահովելու նպատակով: Հարցման համար կազմած պլան-ժամանակացույցը հաստատվում է ՀՖԿՍՊԻ-ի Գիտխորհրդի ՈԱ հանձնաժողովի կողմից:

Յուրաքանչյուր հարցման անցկացման սկզբից երկու շաբաթ առաջ Ուսումնական բաժինը տեղեկացնում է համապատասխան ստորաբաժանման ղեկավարին հարցման անցկացման վերաբերյալ և տրամադրում է հարցաշարը (Հավելված X)՝ ծանոթանալու համար: Մեկ շաբաթվա ընթացքում ստորաբաժանման ղեկավարը կարող է դիմել Ուսումնական բաժնի՝ հարցման վերաբերյալ իր առաջարկների, հարցերի շտկման կամ լրացուցիչ հարցերի ավելացման համար: Հարցման աշխատանքների իրականացումը և հարցումների փաթեթների նախապատրաստումը կարգավորում է **ուսումնական բաժինը**: Հարցման անցկացումից մեկ շաբաթ առաջ ստորաբաժանումները նշանակում են ներկայացուցիչներ, որոնք ապահովում են փոխգործակցությունը հարցման ենթակա ուսանողական խմբերի հետ, նախապես տեղեկացնում են հարցման անցկացման վայրի և ժամանակի մասին:

3. Հարցման արդյունքների մշակումը և օգտագործումը

Հարցման արդյունքները մշակվում են ինստիտուտի **ուսումնական բաժնի** կողմից գործընթացին ներգրավված ստորաբաժանումների և ուսխորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ: Ստացված տվյալները ՈԱԲ-ը քննարկում է հարցումներին մասնակցած կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարների հետ: ՈԱԲ-ի պետը արդյունքների վերաբերյալ զեկուցում է Գիտխորհրդի ՈԱԿ-ի նիստում:

Արդյունքների վերլուծությունն արտացոլվում է բաժնի տարեկան զեկույցում, որը պարունակում է եզրակացություններ ՀՖԿՍՊԻ-ում ուսանողների ուսումնական գործընթացն ապահովող ուսումնական ռեսուրսների, ինստիտուտի կողմից տրամադրվող ծառայությունների արդյունավետության, կիրառելիության և հասանելիության գնահատ-

ման վերաբերյալ և ՀՖԿՍՊԻ ստորաբաժանումներին ուղղված առաջարկներ՝ կոնկրետ ուղղությամբ նրանց գործունեության բարելավման վերաբերյալ: Տարեկան զեկույցում ներկայացված առաջարկները մեկամսյա ժամկետում քննարկվում են ֆակուլտետների խորհուրդներում, այնուհետև ինստիտուտի գիտական խորհրդում:

ՀՖԿՍՊԻ-ի այն ստորաբաժանումները, որոնց գործունեության վերաբերյալ հարցման արդյունքում բացահայտվել են թերություններ, տարեկան զեկույցի հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում ՀՖԿՍՊԻ-ի ռեկտորին են ներկայացնում աշխատանքի բարելավման գործողությունների ծրագիր, որը ենթակա է պարտադիր կատարման:

Աշխատանքի բարելավման գործողությունների ծրագրի նպատակային իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ինստիտուտի Որակի ապահովման բաժինը:

Հարցումներից ստացված տվյալները նախատեսված են ինստիտուտի ներքին օգտագործման համար:

Հարցաթերթիկները պահվում են Ուսումնական բաժնում. մեկ տարի թղթային տարբերակով, երեք տարի՝ էլեկտրոնային:

Հարցման կազմակերպիչները ստացված արդյունքները կարող են հրապարակել ուսումնագիտական գծով պրոռեկտորի և ՈԱԲ-ի պետի համաձայնությամբ:

4. Հարցման թերթիկների մշակում

Հարցման թերթիկը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

1. Հարցման նպատակը
2. Ում կողմից է իրականացվում
3. Հարցերի շարադրումը ըստ բովանդակության հաջորդականության,
4. Բաց և փակ հարցեր
5. Տվյալներ հարցմանը մասնակցողի վերաբերյալ (սեռ, տարիք և այլն):

Հարցերն անհրաժեշտ է բաժանել խմբերի, պետք է ձևակերպել հստակ և մատչելի, ներառել բաց հարցեր՝ շահակիցների կարծիքը հաշվի առնելու համար ըստ գործընթացների, անպայման բանալի հարցեր՝ տեղեկատվության հավաստիության համար:

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԿԱ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՑ ԵՎ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ**

ՀՖԿՍՊԻ-ի հարգելի՛ ուսանող,

Խնդրում ենք մասնակցել այս անանուն հարցմանը, որը մեզ կօգնի հասկանալու մեր ինստիտուտի կողմից մատուցվող կրթական ծառայությունների ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիներ:

1.Սոցիալ-ժողովրդագրական հարցեր

1.1.Նշեք խնդրեմ Ձեր սեռը

Արական Իգական

1.2.Նշեք խնդրեմ Ձեր ծննդյան թիվը_____

Ֆակուլտետը_____

Մասնագիտությունը_____

Կուրսը_____

Բակալավր Մագիստրատուրա

1. Ծանօթ եք Ձեր իրավունքներին և պարտականություններին:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Իրավունքներ	Այո	Ոչ	
2. Պարտականություններ	Այո	Ոչ	

2. Ինստիտուտում Ձեր իրավունքների ոտնահարման դեպքում ու՛մ եք դիմում և որքանո՞վ եք բավարարված:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում /

		Հաճախ	Հազվադեպ	Երբեք	Բավարարվա՞ծ եք	
					Այո	Ոչ
1.	Ռեկտոր					
2.	Պրոռեկտոր					
3.	ՈԱ բաժին					
4.	Դեկան					
5.	Ուսումնական բաժին					
6.	Ամբիոնի վարիչ					
7.	Ուսանողական խորհուրդ					
8.	Դասախոսներ					
9.	Կուրսի խորհրդատու					
10.	Կուրսի ավագ					

3. Տեղա՞յ եք, թե ուսանողներն ինչպես կարող են մասնակցել ինստիտուտի կառավարմանը.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
--------	--	-----------	--	-------	--

4. Ուսանողների կարծիքը հաշվի առնվո՞ւմ է ինստիտուտում որոշումներ կայացնելիս.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո		2. Մասամբ		3. Ոչ	
--------	--	-----------	--	-------	--

5. Ումի՞ց և ինչպե՞ս ուսանողները կարող են տեղեկանալ ուսումնական գործընթացի, գիտելիքների գնահատման համակարգի, դասընթացների, քննական հարցաշարերի և այլնի վերաբերյալ:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

Տեղեկատվության աղբյուր		
1.	Դասախոսներ	
2.	Ուսումնական բաժին	
3.	Դեկան	
4.	Ամբիոն	
5.	Կուրսի խորհրդատու	
6.	Ինստիտուտում փակցված հայտարարություններ	
7.	Ինստիտուտի պաշտոնական կայք	

6. Ինստիտուտի և մասնագիտության ընտրությանը նպաստող գործոնները.

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար մեկ վանդակում/

1.	Մասնագիտական նախասիրությունները	
2.	Ինստիտուտի հեղինակությունը	
3.	Ընտանիքի, ընկերների խորհուրդը	
4.	Ինստիտուտի շրջանավարտի խորհուրդը	
5.	Այլ պատասխան	

7. Խորհրդատվություն ստանալու նպատակով հիմնականում ու՞մ եք դիմում:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

Ռեկտորին	
Դեկանին	
Ուսումնական բաժնի պետին	
Որակի ապահովման բաժնի պետին	
Դասախոսին	

Կուրսի խորհրդատուին	
Այլ	

8. ՀՖԿՍՊԻ-ի վարչական ծառայություններից օգտվե՞լ եք և որքանո՞վ եք գոհ:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով մեկ կամ մի քանի վանդակներում/

	Ծառայության տեսակ	Օգտվել եմ		Գոհ եմ	
		Այո	Ոչ	Այո	Ոչ
1.	Տեղեկանքների տրամադրում				
2.	Բնութագրերի տրամադրում				
3.	Ակադեմիական տեղեկագրի տրամադրում				
4.	Քննությունների կազմակերպում (հարցաշարերի տրամադրում, քննությունների օրերի հայտնում)				
5.	Դիմումների ընդունում				
6.	Խորհրդատվություն				
7.	Կազմակերպչական այլ հարցեր				

9. Գնահատե՞ք ինստիտուտի վարչական ստորաբաժանումների և այլ կառույցների գործունեության արդյունավետությունը /կամ մատուցած ծառայությունները/:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Վարչական ստորաբաժանում	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
1.	Դեկանատ				
2.	Ուսումնական բաժին				
3.	Ամբիոններ				
4.	Որակի ապահովման բաժին				
5.	Միջազգային և գիտատեղեկատվական կենտրոն				
6.	Պրակտիկայի և կարիերայի բաժին				
7.	Ուսանողական գիտական ընկերություն				
8.	Ուսանողական խորհուրդ				
9.	Գրադարան				
10.	Համակարգչային լսարան				
11.	Հաշվապահություն				

11. Ուսումնաարտադրական պրակտիկաները նպաստո՞ւմ են Ձեր մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

	Այո	Ոչ	Մասամբ
1. Գործնական հմտությունների ձեռք բերում			

2.	Ձեռք բերած գիտելիքների կիրառում			
3.	Աշխատանքային կապերի ձեռքբերում			
4.	Աշխատանքային փորձի ձեռքբերում			

12. Գնահատեք Ձեր բավարարվածությունը ինստիտուտի տրամադրած ռեսուրսներից:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

		Գեր.	Լավ	Բավ.	Անբավ.
1.	Ուսումնական լսարանների վիճակը և կահավորանքը				
2.	Ուսումնական կաբինետների, լաբորատորիաների վիճակը և կահավորանքը				
3.	Ինչպե՞ս եք գնահատում գրադարանի, ընթերցասրահի վիճակը և կահավորանքը				
4.	Գրադարանում, ընթերցասրահում առկա ժամանակակից մասնագիտական գրականության վիճակը				
5.	Գրադարանի և ընթերցասրահի աշխատաժամերը և սպասարկումը				
6.	Ինչպե՞ս եք գնահատում ինստիտուտի համակարգչային սրահից Ձեր օգտվելու հասանելիությունը				
7.	Ինստիտուտի համացանցի հասանելիությունը				
8.	Ինստիտուտի էլեկտրոնային առկա գրականությունը				
9.	Ուսումնական գործընթացի կազմակերպումը և սպասարկումն ամբողջությամբ				
10.	Մարզադահլիճների կահավորումը				
11.	Ինստիտուտի ընդհանուր սանիտարահիգիենիկ և սանհանգույցների վիճակը				
12.	Ինստիտուտի ջեռուցման համակարգը				
13.	Սննդի կետի կահավորանքը և սպասարկումը				
14.	Բուժկետ				

13. Ինչպե՞ս կարող եք Ձեր դժգոհությունները, առաջարկություններն արտահայտել ինստիտուտի տրամադրած ռեսուրսների վերաբերյալ (նշել հնարավոր բոլոր տարբերակները)

1. Զրուցել դասախոսների հետ
2. Տեղեկացնել ամբիոնի վարիչին
3. Տեղեկացնել ուսումնական բաժնի պետին
4. Տեղեկացնել որակի ապահովման բաժնի ղեկավարին

13. Ինչպե՞ս են ուսանողները տեղեկանում ինստիտուտի ձեռքբերումների մասին:

/Նշել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով վանդակում/

Գիտական խորհրդի նիստերին մասնակցելով	
Ինստիտուտի պաշտոնական կայքից	
Ուսանողական խորհրդի նիստերին մասնակցելով	
Բուհում փակցված հայտարարություններից	

14. Ձեզ դասավանդող դասախոսները ուսանողներին տրամադրում են իրենց գիտական նվաճումները (օրինակ, իրենց դասավանդած առարկայի շրջանակում ներկայացնում են իրենց կատարած գիտական նորարարությունները, քննարկում իրենց գիտական հոդվածները, մենագրությունները):

1. Հազվադեպ
2. Հաճախ
3. Միշտ
4. Դժվարանում եմ պատասխանել

15.Տեղյակ ե՞ք արդյոք, որ ՀՖԿՍՊԻ-ում գործում է Ուսանողական գիտական ընկերություն:

1. Այո	<input type="checkbox"/>	2. Ոչ	<input type="checkbox"/>
--------	--------------------------	-------	--------------------------

16.Եթե այո, ապա որքան կգնահատեք այս կառույցի աշխատանքը 1-5 բալանոց սանդղակով (1-ը անարդյունավետ, 5-ը շատ արդյունավետ):

1	2	3	4	5
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

17.Նշեք խնդրեմ Ձեր առաջարկությունները և դիտողությունները ՀՖԿՍՊԻ-ի գիտահետազոտական աշխատանքների հետ կապված:

18.Արդյո՞ք հարցումը հնարավորություն տվեց արտահայտելու Ձեր կարծիքը Ինստիտուտի գործունեության վերաբերյալ:

/Գնահատել V պայմանական նշանով՝ յուրաքանչյուր հատկանիշի համար նշելով միայն մեկ վանդակում/

1. Այո	<input type="checkbox"/>	2. Մասամբ	<input type="checkbox"/>	3. Ոչ	<input type="checkbox"/>
--------	--------------------------	-----------	--------------------------	-------	--------------------------

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար